ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 64-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 18-Լ հրամանի 1-ին կետով հաստատված 14-րդ հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 9-րդ կետի 1-ին ենթակետում «կազմակերպումը» բառից հետո լրացնել «, այդ կապակցությամբ իր իրավասության սահմաններում Նախարարության շահերի ներկայացումը» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետ.

«16.1. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը Վարչության ստորաբաժանումների ղեկավարները կարող են ստորագրել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում:».

3) 19-րդ կետի 5-րդ ենթակետում «քննարկումը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման, հաշվառման համարանիշերի և վարորդական իրավունքի տրամադրման կապակցությամբ իր իրավասության սահմաններում լիազորագրի հիման վրա Նախարարության շահերի ներկայացումը» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 27.09.2024թ.

Վ. ՂԱՋԱՐՅԱՆ